

## ՊԱՇՏՈՆ

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՅՐ

ԱՇԽԱՏԱՆՔԸ ՍԿՍԵԼՈՒ ԱՄՍԱԹԻՎ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱԺԱՄԿԵՏ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՎԵՐՋՆԱԺԱՄԿԵՏ

ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏ

Քարտային գործառնությունների բաժնի գլխավոր  
մասնագետ

Լրիվ դրույք

ք. Երևան, ՀՀ

Հնարավորինս շուտ

24/03/2023

14/04/2023

Անորոշ՝ երեք ամիս փորձաշրջանով

«Այդի Բանկ» ՓԲԸ-ն փնտրում է Քարտային գործառնությունների բաժնի գլխավոր մասնագետի՝ ստորև նշված պարտականությունները կատարելու համար:

## ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Վճարային համակարգերի հետ նախագծերի վարում և ընթացիկ աշխատանքների իրականացում,
- Քարտերի թողարկմանն ուղղված և սպասարկման ցանցի զարգացման նախագծերին մասնակցություն, դրանց ստուգումների և ներդրման իրականացում,
- Վճարային համակարգերին ներկայացվող հաշվետվությունների կազմում, ստուգում և ներկայացում,
- Աշխատանքների ավտոմատացման, ընթացիկ ծրագրային փոփոխությունների հետ կապված տեխնիկական հանձնարարականների պատրաստում, դրանց հետագա թեսթավորում և ստուգում,
- Քարտային գործառնությունների բաժնի ընթացիկ աշխատանքների կատարում:

## ՊԱՅԱՆՋՎՈՂ ՈՐԱԿԱՎՈՐՈՒՄՆԵՐ

- Բարձրագույն կրթություն
- 3 տարվա աշխատանքային փորձ
- Բանկային օրենսդրության իմացություն
- Համակարգչային գերազանց գիտելիքներ (MC Office, LS Bank, Smart vista)
- Մայրենի լեզվի գերազանց, անգլերեն և ռուսերեն լեզուների լավ իմացություն
- Հաճախորդների սպասարկման հմտություններ
- Հաղորդակցման հմտություններ
- Խնդիրների արագ և արդյունավետ լուծման կարողություն, միաժամանակ մի քանի առաջադրանք կատարելու կարողություն
- Փոփոխություններին արագ արձագանքելու կարողություն
- Մանրութների նկատմամբ ուշադրություն
- Գործարար էթիկայի նորմերի իմացություն և դրանց կիրառում

## ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Փորձաշրջանի բարեհաջող ավարտից հետո Բանկն իր աշխատակիցներին առաջարկում է արտոնությունների լայն փաթեթ, մասնավորապես, բժշկական ապահովագրություն, պարգևատրման ճկուն համակարգ, սպորտ ակումբների ծառայություններից օգտվելու կորպորատիվ փաթեթ, արտոնյալ պայմաններով բանկային ծառայություններ և այլն:

## ԴԻՄԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե որակավորումները համապատասխանում են վերը նշված հաստիքի պահանջներին և դուք հետաքրքրված եք միանալու Այդի Բանկի թիմին, խնդրում ենք լրացնել հայտարարությանը կից ներկայացված դիմում-հայտը և այն ուղարկել [hr@idbank.am](mailto:hr@idbank.am) էլ.փոստի հասցեին՝ մինչև հայտարարության վերջնաժամկետը՝ վերնագիր (subject) տողում պարտադիր նշելով հաստիքի անվանումը: Հարցազրույցի կիրավիրվեն նախնական ընտրությունը անցած դիմորդները:

## ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Այդի Բանկը» հիմնադրվել է 1990թ.-ին «Անելիք Բանկ» անվանումով, իսկ 2018թ. Հունիսի 4-ից Բանկը ներկայանում է «Այդի Բանկ» անվանումով: Այդի Բանկի առաքելություն է լինել առաջին ընտրության Բանկ հաճախորդների համար որպես լավագույն նորարար Բանկ՝ հաճախորդներին տրամադրելով անհատական մոտեցմամբ արդիական թվային լուծումներ: Բանկի մասին հավելյալ տեղեկատվության համար կարող եք այցելել Բանկի պաշտոնական կայքը <https://www.idbank.am/>: